ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/68

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2022 թ. N 68

ԴԻԼԻՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան փող. 2-րդ նրբանցք

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ.հուլիսի 21-ին քննարկեց «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԴՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	12 փետրվարի 2021 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	15 հուլիսի 2021 թ.
փորձագիտական այցի իրականացում	15-18 նոյեմբերի 2021 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	17 հունվարի 2022 թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	17 մարտի 2022 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ», գնահատվել են անբավարար:**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Դիլիջանի պետական բժշկական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ՄՈՒՀ-ն առաջարկում է աշխատաշուկայում բավականին պահանջված մասնագիտություններ: ՄԿԾ-ները համահունչ են ՄՈՒՀ-ի առաքելությանը, համապատասխանում են ՊԿՁ-ներին և ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի պահանջներին:

ՄՈՒՀ-ը բավարար ուշադրություն է դարձնում ՄԿԾ մշակման և վերանայմանը, սահմանվել են վերջնարդյունքներ, որոնք երբեմն քննարկվում են գործատուների հետ: Ամբիոնների կողմից մշակվում են ՄԿԾ-ներից ակնկալվող վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը: ՄԿԾ-ները համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին, գործատուները հիմնականում բավարարված են ՄՈՒՀ-ի շրջանավարտների տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից:

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ և բավականին կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մեծ է բժիշկ-մասնագետների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում:

Աշխատաշուկայի կարիքներից բխող մասնագիտությունների առաջարկը լավ հնարավորություններ է ստեղծում ուսանողների աշխատանքի տեղավորման համար:

Վերջնարդյունքների ապահովման համար ռեսուրսային (նյութական, շենքային, ժամանակակից սարքավորումների) բացերը ՄՈՒՀ-ը փորձում է լրացնել գործատուների հետ սերտ համագործակցությամբ, սակայն սեփական ռեսուրսների բարելավման ուղղությամբ աշխատանքներ ակտիվ չեն իրականացվել:

Աշխատաշուկայում բավականին պահանջված բժշկական մասնագիտություններով կադրերի թողարկումը և համապատասխան գործատուների հետ սերտ կապը, տվյալ դեպքում մեծ տոկոս

կազմող բժիշկ-դասախոսների ներգրավումը ուսումնական գործընթացում և պրակտիկայի անցկացումը բուժհաստատություններում՝ հնարավորություն է տվել քոլեջին ապահովել արդի, գործնական հմտություններով, ՈԱԾ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստմանը: Թեև նյութատեխնիկական հագեցվածության ոչ արդիական վիճակը խնդիրներ է ստեղծում ուսումնառողների գործնական հմտությունների արդյունավետ ձևավորման համար, սակայն ուսանողների գործնական և պրակտիկ դասընթացների կազմակերպման համար բազաներ են հանդիսանում Դիլիջանի ԲԿ-ն և այլ բուժհաստատություններ:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՄՈՒՀ-ում փորձ է արվել իրականացնել ռազմավարական պլանավորում, սակայն գործընթացը դեռևս սաղմնային փուլում է: Քոլեջի առաքելության իրականացման համար մշակված է հնգամյա զարգացման ծրագիր, որտեղ սահմանված են զարգացման նպատակները և խնդիրները: Ձևակերպված խնդիրներն ընդհանուր առմամբ ուղղված են սահմանված ռազմավարական նպատակների իրագործմանը: Թեպետ քոլեջում մշակվում են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, սակայն բացակայում են դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:
Քոլեջի կառավարման համակարգն ապահովված չէ բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով:
Ռազմավարական փաստաթղթերը չեն դիտարկվում որպես կառավարման համակարգի գործունեության կարևոր հիմք: Կառավարչական, ինչպես նաև այլ բովանդակային փաստաթղթերը հասանելի չեն շահակիցներին, ինչը առանցքային խնդիրներից է:
Որոշումները կայացվում են ընդհանուր առմամբ քոլեջի խնդիրների գիտակցման և փորձի հիման վրա: ՄՈՒՀ-ը վերջերս է ձեռնարկել որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները և դեռ գտնվում է ձևավորման փուլում: Որակի ապահովման համակարգը դեռևս ազդեցություն չունի քոլեջի կառավարման և որոշումների կայացման վրա:

Քոլեջը ստեղծվել է բժշկական ուղղվածության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով, սակայն որպես տարածաշրջանում միակ բժշկական ՄՈՒՀ՝ այն բարեփոխումների կարիք ունի:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջը չունի հետազոտության իրականացման քաղաքականություն և չի սահմանել հետազոտության ոլորտում իր հիմնական հավակնությունների շրջանակը, ինչպես նաև սահմանված չեն երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:
Հետազոտական աշխատանքների իրականացման համար քոլեջը խիստ կարիք ունի ռեսուրսների համալրման, լաբորատորիաների հագեցման, ինչպես նաև լաբորատոր և գործնական աշխատանքների իրականացման համար ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման, ուսանողների հետազոտավերլուծական աշխատանքների միասնական համակարգի ներդրման: Այնուամենայնիվ, քոլեջում բժիշկ-դասախոսների նախաձեռնությամբ ներդրված են ուսումնառության

և հետազոտական գործունեության փոխկապակցվածության, ուսանողների վերլուծական մտածողության զարգացման որոշ մեխանիզմներ: Սակայն չկան այդ արդյունքների գնահատման և խրախուսման մեխանիզմներ:
Արտաքին կապերը հիմնականում սահմանափակվում են տարածաշրջանային կապերով (գործատուների հետ): Մայրաքաղաքի կամ մարզային բուհերի և այլ հաստատությունների հետ համագործակցությունը խիստ սահմանափակ է: Միևնույն ժամանակ՝ արտաքին շահակիցների հետ հետադարձ կապը նպաստել է կրթական ծրագրերի բարելավումներին:

Քոլեջի պաշտոնական կայքի բացակայության պատճառով քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ներկայացված հաշվետվությունները հասանելի չեն ներքին և արտաքին շահակիցներին:
Կայքի ստեղծման ուղղությամբ սեփական միջոցներով քոլեջը փորձում է քայլեր ձեռնարկել:

Առկա է ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն, ինչպես նաև ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ և մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով կառավարման և վարչարարության, ռեսուրսների, հետազոտության և զարգացման, արտաքին կապերի և միջազգայնացման, որակի ապահովման ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - քոլեջի առաքելության և նպատակների, ինչպես նաև իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ակտիվ ներգրավումը ապահովող արդյունավետ մեխանիզմների մշակմանը և ներդրմանը,
   - դասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման, մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ մեխանիզմների կիրառմանը,

- հատուկ կարիքներ ունեցողների համար պայմանների ստեղծմանը,
- հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը
- Որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Դիլիջանի պետական բժշկական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. օգոստոսի 19
ք.Երևան